

# ԵՐԳ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

## ԳՈՒՍՏԱՎ ՄԱԼԵՐ

Հանս Բեթգե. թարգմանություն՝ Հակոբ Մովսես

### 1. Մեղանի երգ երկրային վշտերի մասին

Լի Թայ Բո (701-762), տենորի համար

Կայծկլտում է գինին ոսկյա գավաթներում,  
Բայց դեռ մի խմեք, նախ թողեք, որ ես երգե՛մ ձեզ  
համար:

Երգը վշտերի մասին

Պետք է ծիծաղելով հնչի ձեր հոգիներում:

Երբ վիշտը մոտենում է,

Ամայանում են պարտեզները հոգու,

Թռչնում է և մեռնում բերկրանքը՝ երգը:

Խավար է կյանքը, մահն է ներս մտնում:

Դու, այս տան տե՛ր և տնտե՛ս,

Քո մտանը լի է ոսկյա գինով:

Տե՛ր, ես այս վինն եմ ինձ համար խնդրում:

Խփել լարերին և դատարկել բաժակները,

Այս երկուսը այստեղ վայել են իրար:

Գինու մի լի բաժակ ճիշտ ժամանակին

Ինձ համար առավել թանկ է, քան ողջ գանձե՛րն այս  
երկրի:

Խավար է կյանքը, մահն է ներս մտնում:

Երկնակամարը կապույտ է հավետ, և երկիրը

Դեռ երկար կկանգնի հաստատուն, կփթթի գարնան  
մեջ:

Մակայն դու, մարդ, դու որքա՞ն ես ապրում:

Հազի՛վ հարյուր տարի դու զվարճանաս

Այս երկրի նեխած ողջ փուչության մեջ:

Նայեք. գերեզմանոցում լուսնի լույսի մեջ

Մոսկալի ուրվականի պես մի պատկեր է նստած:

Կապի՛կ է ասես: Ականջ դրեք՝ նրա ոռնոցն է

Մուր լցվում կյանքի քաղցր բույրի մեջ:

Այժմ վերցրե՛ք գինին: Ժամն է, ընկերնե՛ր:

Ձեր բաժակները պարպե՛ք ցմրուր:

Խավա՛ր է կյանքը, մահն է ներս մտնում:

## 2. Մենակյացը աշնանը

Չանգ Յի (765-830), կոնտրալտոյի կամ բարիտոնի  
համար

Աշնանային մշուշներն են թավալվում լճի վրայով:

Ցողով են ծածկված խոտերը բոլոր:

Ասես մի նկարիչ ոսկեփոշի է շաղ տվել

Նուրբ ծաղիկների վրա:

Չքվել է քաղցր բույրը ծաղիկների:

Մի պաղ քամի է ճկում ցողունները նրանց:

Շուտով լոտոսի թոռումած, ոսկյա

Թերթիկները կփովեն ջրերի վրա:

Հոգնած է սիրտս: Իմ փոքրիկ լամպը

Թրթռալով հանգավ, քունն է ինձ առնում:

Ես դեպի քեզ եմ գալիս, բաղձալի՜ անդորր:

Հանգիստ բեր դու ինձ, ես ուզում եմ ննջե լ:

Ես լալիս եմ ահա իմ մենության մեջ:

Աշունն իմ սրտում շատ երկար մնաց:

Միրո արեգակ, էլ չե՞ս ուզում շողալ,

Որ իմ դառը արցունքները մեղմ չորացնես:

### 3. Պատանեկության մասին

Լի Թայ Բո, (701-762), ակտի համար

Փոքրիկ լճակի կենտրոնում  
Մի տաղավար է կանգնած կանաչ  
Եվ ճերմակ ճենապակուց:

Ասես վագրի կոնակ՝  
Ուռչում է կամրջակը ճերմակ,  
Որը դեպի տաղավար է տանում:

Լռությամբ նստած են ընկերները,  
Գեղեցիկ հագնված, խմում են, գրուցում:  
Ոմանք բանաստեղծություններ են գրում:

Նրանց մետաքսյա թևերը հետ են ոլորված,  
Նրանց մետաքսյա գլխարկները  
Դեպի ծոծրակներն են ուրախ թեքված:  
Փոքրիկ լճակում ջրի մակերեսը  
Արտացոլում է ամեն ինչ  
Հայելային անդրադարձմամբ,

Տաղավարում այդ կանաչ  
Եվ ճերմակ ճենապակուց  
Ամեն ինչ երևում է գլխիվայր շուռ եկած,

Կամուրջը՝ ասես կիսալուսին,  
Սակայն շուռ եկած: Ընկերներն են,  
Գեղեցիկ հագնված, խմում և գրուցում:

#### 4. Գեղեցկության մասին

Լի Թայ Բո, (701-762), կոնտրալտոյի կամ բարիտոնի  
համար

Ջահել աղջիկները ծաղիկ են քաղում,  
Քաղում են լոտոսի ծաղիկները ափեզրերից:  
Նրանք նստում են թփուտների և տերևների միջև,  
Ծաղիկները հավաքում են իրենց գրկերում  
Եվ իրար են կանչում՝ միմյանց զվարճացնելով:  
Ոսկյա արեգակն է նրանց դեմքերին,  
Նա նրանց շողքերը գցում է պարզ ջրերին:  
Արեգակը արտացոլում է նրանց ճկուն մարմինները,  
Նրանց քաղցր աչքերը,  
Եվ զեփյուռը չարաճճի  
Հետ է տանում գործվածքը նրանց թևերի:  
Նրանց բույրի  
Կախարդանքն է գնում օդով:

Օ, նայիր, ինչպես են խոնվում գեղեցիկ տղաները  
Այնտեղ ափեզրերին առույգ նժույզներով՝  
Հեռվում փայլփլելով արևի շողերի մեջ:  
Կանաչ ուռիների ճյուղերի միջով  
Երևում է աղջիկների խումբը խրտնած:  
Տղաներից մեկի նժույզը գոհ ծառս է լինում,  
Վրնջում է և մոտենում,  
Ծաղիկների, խոտերի վրա պեծկլտում են պայտերը,  
Նրանք կոխկոտում են մոլեգնությամբ ջարդված  
ծաղիկները:  
Ա՛յ: Ինչպես է թափով ծփում նրա բաշը,  
Ուռչում են վառվող ռունգերը:  
Ոսկյա արեգակն է նրանց դեմքերին,  
Նա նրանց շողերը գցում է պարզ ջրերին:

Եվ աղջիկներից ամենագեղեցիկը  
Նրա հետևից կարտաբաղձ երկար հայացքներ է  
նետում:  
Նրա հպարտ կեցվածքը – միայն ձևացում է:  
Նրա մեծ աչքերի կայծերի մեջ,  
Նրա ջերմ հայացքի մթության մեջ  
Նրա սրտի հուզումն է գանգատվելով լռում:

## 5. Հարքածը գարնանը

Լի Թայ Բո, (701-762), տենորի համար

Եթե մի երագ է կյանքը,  
Էլ ինչո՞ւ տառապանք և տվայտանք:  
Ես ողջ օրը խմում եմ,  
Մինչև էլ չկարողանամ:

Եվ երբ էլ չեմ կարող խմել,  
Քանզի լիքն է կոկորդս և հոգիս,  
Օրորվելով գնում եմ մինչև իմ դուռը  
Եվ քնում եմ ամուր:

Բայց ի՞նչ եմ լսում արթնանալիս:  
Թռչունն է ծառից երգում:  
Ես հարցնում եմ նրան՝ արդեն գարն ան է,  
Ես ասես երագում լինեմ:

Թռչունը ծվլում է. այո, գարուն է  
Արդեն, այն գիշերն է եկել:  
Ես երկար նայում եմ և լսում,  
Թռչունը երգում է և ծիծաղում:

Ես կրկին լցնում եմ բաժակս  
Եվ դատարկում եմ ցմրուր  
Եվ երգում եմ, մինչև լուսինը փայլի  
Սև երկնակամարին:

Եվ երբ այլևս չեմ կարողանում երգել,  
Նորից քուն եմ մտնում:  
Ինչի՞ ս է գարունը, ասացեք,  
Թող ես միշտ խմած լինեմ:

## 6. Հրաժեշտը

Վանգ Վեյ (701-761), կոնտրալտոյի կամ բարիտոնի  
համար

Արևը թաքնվում է լեռների հետևում,  
Բոլոր հովիտներում երեկոն է իջնում  
Իր ստվերներով, որ լիքն են սառնությամբ:  
Օ, տես, ինչպես է արծաթե նավակի պես ճոճվում  
Լուսնյակը երկնային կապույտ լճակում:  
Ես գգում եմ քամու սոսափը հեռավոր  
Մթին սոճիների հետևում:

Լիահունչ երգում է առվակը մթության մեջ:  
Ծաղիկները գունատվում են մթնշաղի փայլերում:  
Երկիրը շնչում է՝ քնով և անդորրով լցված:  
Ողջ կարոտները շրջվում են երազանքի:  
Հոգնեցած մարդիկ դեպի տուն են դառնում՝  
Մոռացված երջանկությունն ու պատանեկությունը  
Քնի մեջ նորից տեսնելու համար:  
Թռչունները խաղաղ ծվարում են իրենց ճյուղերում:  
Աշխարհը քուն է մտնում:

Պաղ քամի է փչում ստվերներում իմ սոճիների:  
Ես կանգնում եմ այստեղ սպասմամբ իմ ընկերոջ:  
Ես ուզում եմ նրան մնաս բարով ասել:  
Ես կուզենայի, ընկեր, քեզ հետ միասին  
Այս երեկոյի գեղեցկությունը վայելել:  
Դու որտե՞ղ ես արդյոք: Ինձ մենակ ես թողել:  
Ես իմ վիճակ գնում եմ և գալիս  
Փափուկ խոտով ծփացող ճանապարհով:  
Օ, գեղեցկություն: Օ, հավերժական սիրով և  
կյանքով հարբեցած աշխարհ:

Իջնում եմ ձիուց և ընկերոջս մեկնում  
Ընայելիքը հրաժեշտի:  
Նա հարցնում է. ես ո՞ր եմ գնում  
Եվ ինչի՞ համար:  
Ես ասում եմ, և ձայնս դողում է. ընկեր իմ,  
Այս աշխարհը ինձ երջանկություն չտվեց:  
Ես որտեղ եմ գնում: Ես գնում եմ, թափառում եմ  
լեռներում,  
Ես հանգիստ եմ փնտրում միայնակ իմ սրտի  
համար:  
Ես դեպի հայրենիք եմ գնում, ես իմ տեղն եմ  
փնտրում:  
Ես երկար չեմ թափառի հեռուներում:  
Խաղաղ է սիրտն իմ, նա իր ժամին է սպասում:

Միբելի երկիրը ամենուրեք  
Ծաղկում է զարնան մեջ և նորից կանաչում:  
Ամենուր և հավետ լուսավոր է հեռուն,  
Հավետ... Հավետ...